

Համաձայնեցված է

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Վ. Գաբրիելյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան**

09 հունիսի 2011 թ.

07 հունիսի 2011 թ. N 28

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 28

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-227-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից), «Լիցենզավորման մասին» ՀՀ 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակը շարադրվել է նոր խմբագրությամբ: «Լիցենզավորման մասին» ՀՀ 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի «17. Քաղաքաշինության բնագավառ» բաժնի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները բաժանված էին հինգ քաղաքաշինական ոլորտների: Դրանք են՝

1) բնակելի (բացառությամբ ոչ ձեռնարկատիրական նպատակով կառուցվող անհատական բնակելի տների, ավտոտնակների, օժանդակ շինությունների, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների), հասարակական և արտադրական (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների),

- 2) տրանսպորտային,
- 3) հիդրոտեխնիկական,
- 4) էներգետիկ,
- 5) կապի:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-227-Ն օրենքում ըստ քաղաքաշինական ոլորտների տարանջատումներ չեն սահմանվել: Քաղաքաշինական ոլորտների վերաբերյալ համապատասխան նշումներ, «Լիցենզավորման մասին» ՀՀ 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, կատարվում է լիցենզիայի ներդիրում: Ընդ որում, լիցենզիա ստանալու նպատակով անձինք կարող են դիմել ինչպես նշված բոլոր ոլորտների, այնպես էլ դրանցից մի քանիսի կամ յուրաքանչյուրի համար:

Առկա իրավիճակում տարաբնույթ է ընկալվում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ կետով սահմանված քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների պետական տուրքի դրույքաչափերի հարցը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն և հաշվի առնելով վերը նշվածը, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների պետական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է նկատի ունենալով հայցվող քաղաքաշինական ոլորտների ներդիրների քանակը՝ հայցվող յուրաքանչյուր ոլորտի համար լիցենզիաների պետական տուրքի դրույքաչափը բաժանած հինգի: